


Հայաստանի վիճակագրական համակարգի ակնարկ



**Հայաստանի վիճակագրություն**

**Ընդհանուր տեղեկություն**

Հայաստանի Հանրապետության վիճակագրական համակարգն ամբողջովին կենտրոնացված է և ֆինանսավորվում է պետական բյուջեից:

Հայաստանի վիճակագրական ծառայության հիմնական առաքելությունն է՝ հանրության համար պաշտոնական վիճակագրության հավաքագրումը, հրապարակումը և տարածումը:


Հայաստանի վիճակագրական համակարգը բաղկացած է կենտրոնական ապարատից և 10 մարզային ու Երևան քաղաքի գործակալություններից:

**Անվանումը՝** ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

**Քարճրագույն մարմինը՝** ՀՀ վիճակագրության պետական խորհուրդ

**Ղեկավարը՝** ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահը, որը միաժամանակ հանդիսանում է խորհրդի նախագահ

Ղեկավարը և խորհրդի մնացած 6 անդամները նշանակվում են Հանրապետության Նախագահի հրամանագրով՝ 6 տարի ժամկետով:



**Հայաստանի վիճակագրություն**

**Դիրքը պետական կառավարման համակարգում**


Վարչական դիրքը. ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ) հանրային շահին ուղղված գործառնություններ իրականացնող մարմին է, որն իր խնդիրներն իրականացնելիս անկախ է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմը միասնական համակարգ է, որն իր մեջ ներառում է գործառնական և տարածքային միավորներ: Անձնակազմի անդամները քաղաքացիական ծառայողներ են:

ՀՀ ԱՎԾ գործունեությունը հիմնված է վիճակագրական աշխատանքների ծրագրերի վրա: Այն պատասխանատու է վիճակագրական աշխատանքների ծրագրի շրջանակում սպառողներին վիճակագրական տեղեկատվության տրամադրման համար:

Վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը հաստատվում է ՀՀ Ազգային ժողովի, իսկ դրա շրջանակում տարեկան ծրագրերը՝ Վիճակագրության պետական խորհրդի կողմից և ֆինանսավորվում՝ պետական բյուջեից:

ՀՀ ԱՎԾ կառավարման բարձրագույն մարմինը 7 անդամից բաղկացած Վիճակագրության պետական խորհուրդն է, որն իրավասու է ընդունելու վիճակագրության բնագավառին առնչվող նորմատիվ բնույթի իրավական ուժ ունեցող ակտեր:



**Հայաստանի վիճակագրություն**

**Համառոտ պատմություն**


Հայաստանի վիճակագրական համակարգը պաշտոնապես սկսել է գործել 1921թ., երբ ստեղծվել է Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը:

Մինչ 1990թ. Հայաստանի կենտրոնական վիճակագրության վարչության վիճակագրական աշխատանքն իրականացվել է ԽՍՀՄ կենտրոնական վիճակագրության վարչության անմիջական ղեկավարության ներքո:

ԽՍՀՄ փլուզումից հետո ՀՀ ԱՎԾ գործունեությունն անմիջականորեն իրականացվում էր ՀՀ կառավարության ուղղորդմամբ:

2000թ. ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը ձեռք է բերել հանրային շահին ուղղված գործառնություններ իրականացնող պետական մարմնի կարգավիճակ, որն իր խնդիրներն իրականացնելիս անկախ է այլ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից:

2008թ. ապրիլի 29-ին ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի կազմակերպական ցուցաբերումով ՀՀ-ն ընտրվել է ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի նոր անդամ: Անդամակցությունը 4 տարի ժամկետով էր՝ սկսած 2009թ. հունվարի 1-ից:



**Հայաստանի վիճակագրություն**

**Իրավական հիմքերը.**

- «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքն՝ ընդունված 04.04.2000թ.,
- «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքն ընդունված 12.10.1999թ.,
- «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքն ընդունված 04.12.2001թ., որն ուժի մեջ է մտել 09.01.2002թ.՝ Նշված օրենքի դրույթներն ամբողջությամբ ՀՀ ԱՎԾ աշխատակազմում գործում են 2002թ. դեկտեմբերից)
- «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 27.11.2008թ.
- Պետական վիճակագրական աշխատանքների ծրագրերը.
  - Պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիր /օրենք/,
  - Պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագիր (նորմատիվ գերատեսչական ակտ).

Վիճակագրության պետական խորհրդի որոշումները և այլ ազգային ու վերազգային նորմատիվային ակտերը:

**Պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կազմման սկզբունքները.**

- առկա ռեսուրսների սահմանափակումները,
- վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը,
- ծախսերի արդյունավետությունը
- համադրելիությունը միջազգային վիճակագրական չափանիշներին
- երկարաժամկետ միջակայքում կայուն պարբերականությունը
- տարեկան կտրվածքով պետական վիճակագրությանը հատկացվող, ռեսուրսների հետ համաչափությունը,
- սպառողների պահանջարկի ուսումնասիրությունը:

(Պետական վիճակագրության մասին ՀՀ օրենքի 11-րդ հոդված)

**Հայաստանի վիճակագրություն**

**Հիմնական գործառնությունները**

վիճակագրական տվյալների հավաքագրում, մշակում, ամփոփում, վերլուծություն և հրատարակում, համագործակցություն համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ վիճակագրական տեղեկատվության հավաքագրման ոլորտում, վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության մշակում և կատարելագործում, տեղեկատվության և տվյալների հավաքագրման համակարգում միջազգային ստանդարտների վրա հիմնված համընդհանուր դասակարգման և կոդավորման համակարգին համապատասխան, վիճակագրական հետազոտությունների կազմակերպում, մարդահամարների անցկացում, գյուղատնտեսական համատարած հաշվառում 10 տարին մեկ, բիզնես - ռեգիստրի ստեղծում, վարում և արդիականացում, սպառողներին վիճակագրական տեղեկատվության տրամադրում, ամփոփ վիճակագրական տեղեկատվության թափանցիկության և մատչելիության ապահովում, համագործակցություն միջազգային կազմակերպությունների և ազգային վիճակագրական ծառայությունների հետ:

**Հայաստանի վիճակագրություն**

**Աշխատակիցների տոկոսային բաշխվածությունը ըստ մասնագիտությունների (որակավորման), 2013թ.**

Կատեգորիա	Տոկոս
1. Տնտեսագետներ	42.5%
2. Ճարտարագետներ	20.1%
3. Մաթեմատիկոսներ	13.3%
4. Մանկավարժներ	10.5%
5. Այլ	7.0%
6. Չունի	6.6%

**Հայաստանի վիճակագրություն**


**Անճնակազմի քանակական բաշխվածությունը ըստ կրթական մակարդակի**

Կրթական մակարդակ	Քանակ
Բարձրագույն	320
այդ թվում՝ գիտական աստիճան և կոչում ունեցողներ	8
Միջին մասնագիտական	5
Միջնակարգ (լրիվ) ընդհանուր	23

**Հայաստանի վիճակագրություն**

**Միջազգային համագործակցության համաձայնագրեր.**

Վրդգստանի Հանրապետություն (ստորագրված՝ 21.04.97թ. վավերացված՝ 07.05.98թ.)  
 Տաջիկիստանի Հանրապետություն (ստորագրված՝ 10.03.98թ. վավերացված՝ 20.09.99թ.)  
 Ռուսաստանի Դաշնություն (ստորագրված՝ 14.05.99թ. վավերացված՝ 20.09.99թ.)  
 Բուլղարիա (ստորագրված՝ 01.12.99թ., վավերացված՝ 08.03.2000թ.)  
 Բելառուս (ստորագրված՝ 20.09.00թ., վավերացված՝ 28.12.2000թ.)  
 Փոխըմբռնման Հուշագիր Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ազգային վիճակագրական ծառայությունների միջև (ստորագրված՝ 02.10.1998թ.)  
 Համաձայնագիր Եվրոստատի և ՀՀ վիճակագրության միջև արտաքին առևտրին վերաբերող վիճակագրական տվյալների փոխանակման մասին (ստորագրված՝ 23.02.99թ., վավերացված՝ 20.09.99թ.)  
 Հուշագիր Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի ազգային վիճակագրական ծառայությունների միջև համագործակցության խորացման մասին (ստորագրված՝ 26.05.2000 թ.)  
 Հուշագիր Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի ազգային վիճակագրական ծառայությունների միջև համագործակցության հետագա խորացման մասին (ստորագրված՝ 15.10.2002 թ.)  
 Փոխըմբռնման Հուշագիր ՀՀ ԱՎԾ, ԱՊՀ միջպետական վիճակագրության կոմիտեի, ՌԴ վիճակագրության միջև ԱՊՀ տարածաշրջանում միջազգային համադրումների ծրագրի իրականացման մասին (ստորագրված՝ 17.12.2003թ.)  
 Փոխըմբռնման Հուշագիր ՀՀ ԱՎԾ և ԱՊՀ միջպետական վիճակագրության կոմիտեի միջև ԱՊՀ տարածաշրջանում միջազգային համադրման ծրագրի Գլխավոր ռաունդի շրջանակում 2011թ. ՀՆԱ-ի միջազգային համադրումների իրականացման մասին (ստորագրված՝ 09.04.2010թ.)  
 Փոխըմբռնման Հուշագիր ՀՀ ԱՎԾ և Իրանի Իսլամական Հանրապետության վիճակագրության կենտրոնի միջև (ստորագրված՝ 06.12.2013թ.)



**Հայաստանի վիճակագրություն**


**Հետազոտություններ.**

**Պետական բյուջե**

1. Հայաստանի Հանրապետության **տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն**
2. **Գյուղատնտեսության վիճակագրություն**  
հացահատիկի բերքահավաքի որակի վերաբերյալ հետազոտություն
3. **Առևտրային կազմակերպություններում աշխատողների քվարանակի և աշխատավարձի մասին հետազոտություն**

*Պետական բյուջե և ԱՄՆ ՄՁԳ ձեռնարկությունների զարգացման ու շուկայի մրցունակության ու Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերակցության Հարավային Կովկասում տնտեսության խթանման ծրագրերի միջոցներ*


4. **Վճարային հաշվեկշիռի և արտաքին առևտրի վիճակագրություն**  
Չբոսաշրջության վիճակագրական հետազոտություն



**Հայաստանի վիճակագրություն**

**Վերջին առանցքային հրապարակումներն անգլերեն.**

1. Վիճակագրական հրապարակումների համացանկ, 2013
2. ՀՀ արտաքին հաշիվներ, 2013
3. ՀՀ արտաքին առևտուրը 2012 թվականին (դասակարգման 2-նիշ մակարդակ)
4. ՀՀ արտաքին առևտուրը 2012 թվականին (դասակարգման 4-նիշ մակարդակ)
5. ՀՀ արտաքին առևտուրը 2012 թվականին (դասակարգման 8-նիշ մակարդակ)
6. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2013
7. Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2013
8. Հայաստանի ազգային հաշիվներ, 2013
9. Հայաստանի ֆինանսների վիճակագրությունը, 2013
10. Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2013
11. Երջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում 2012 թվականին
12. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2013
13. Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2013
14. Հայաստանը թվերով, 2013
15. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2013
16. Ազգային ամփոփ տվյալների էջ (Էլեկտրոնային)
17. Պարենային ապահովություն և աղքատություն
18. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները (մամուլի հաղորդագրություն)
19. ՀՀ սպառողական գների ինդեքսը (մամուլի հաղորդագրություն)



**Հայաստանի վիճակագրություն**

**Միջազգային դասակարգումների օգտագործում.**

NACE Rev.2,  
CPA, PRODCOM,  
ISCO-88,  
ISCED,  
HS/CN,  
ICD-10,  
NUTS,  
SITCISCED,  
COICOP

**Միջազգային ստանդարտներ.**

ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհուրդը 2008թ.-ի ապրիլի 29-ին Հայաստանին ընտրել է Միավորված ազգերի կազմակերպության վիճակագրական հանձնաժողովի անդամ սկսած 2009թ. հունվարի 1-ից՝ չորս տարի ժամկետով: ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովը բաղկացած է 24 անդամ երկրներից:

Հայաստանի Հանրապետությունը անդամակցում է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) Տվյալների տարածման հատուկ ստանդարտին (SSՀU) 2003թ. նոյեմբերի 7-ից՝ դառնալով այդ ստանդարտին անդամագրվող 54-րդ երկիրը (2013թ. հունվարի դրությամբ ստանդարտին անդամագրված է 71 երկիր):

«...Երկրները, որոնք մասնակցում են Տվյալների տարածման ընդհանուր համակարգին (ԱՄՀ ՏՏՀ), կարող են դիտարկվել որպես երկրներ, որոնք պարտավորություն են ստանձնում բարելավել համապատասխան վիճակագրական ցուցանիշների որակը, մինչդեռ Տվյալների տարածման հատուկ ստանդարտին (ԱՄՀ ՏՏՀ) մասնակցող երկրները կարող են դիտարկվել որպես ավելի զարգացած վիճակագրական կարողություն ունեցողներ՝ ՏՏՀ մասնակցող և ընդհանրապես համակարգին չմասնակցող երկրների համեմատ:»

(Региональное развитие статистики в Азиатско-Тихоокеанском регионе, Записка Генерального Секретаря, пункт 37. ООН, Экономический и Социальный Совет, Статистическая комиссия, 40-ая сессия, 24-27 февраля 2009. документ E/CN.3/2009/15)

## Statistical Capacity Indicator Summary Description Armenia

[View detailed description](#)

2013 Statistical Capacity Indicator (on a scale of 0-100)		
Indicator	Armenia	All Countries**
Overall	89	68
Methodology	100	58
Source Data	80	65
Periodicity & Timeliness	87	82


Methodology (2013)	Status	Value	Weight	Score
National accounts base year	Annual chain linking or base year within last 10 years	1	10	10
Balance of payments manual in use	Using BPM5 or 6 in use	1	10	10
External debt reporting status	Actual or preliminary	1	10	10
Consumer price index base year	Base year within last 10 years	1	10	10
Industrial production index	Available monthly/quarterly	1	10	10
Import and export price indexes	Available monthly/quarterly	1	10	10
Government finance accounting	Accounts consolidated	1	10	10
UNESCO reporting	Less than 3 times in last 4 years	1	10	10
National immunization coverage	Consistent with WHO/UNICEF	1	10	10
Special Data Dissemination Standard	Subscribes	1	10	10
<b>TOTAL Methodology (All Countries=58)</b>				<b>100</b>
Source Data (2013)	Status	Value	Weight	Score
Population census	Periodicity of 10 years or less	1	20	20
Health survey	Periodicity of 3 years or less	1	20	20
Poverty survey	Periodicity of 3 years or less	1	20	20
Agricultural census	Periodicity longer than 10 years	0	20	0
Vital registration system coverage	Complete	1	20	20
<b>TOTAL Source Data (All Countries=65)</b>				<b>80</b>
Periodicity & Timeliness (2013)	Status	Value	Weight	Score
Income poverty	Periodicity of 3 years or less	1	10	10
Child malnutrition	Periodicity between 3 and 5 years	0.7	10	6.7
Child mortality	National/international estimate is available for reference years	1	10	10
Immunization	Periodicity of 1 year	1	10	10
Per capita GDP growth	Periodicity of 1 year	1	10	10
HIV/AIDS	National/international estimate is available for reference years	1	10	10
Maternal health	Periodicity of 3 years or less	1	10	10
Gender equality	Indicator observed for at least 5 out of 5 latest years	0.7	10	6.7
Primary completion	Indicator observed for at least 1 out of 5 latest years	0.3	10	3.3
Access to water	Indicator observed for at least 2 out of 6 latest years	1	10	10
<b>TOTAL Periodicity &amp; Timeliness (All Countries=82)</b>				<b>87</b>

\*\* All countries include low- and middle-income IDA/IBRD countries with a population of over 1 million.






Հայաստանի վիճակագրություն

2013 թվականի ընթացքում ՀՀ ԱՎԾ կողմից իրականացված փաստացի ծախսերի կառուցվածքը



Հայաստանի վիճակագրություն







Հայաստանի վիճակագրություն

**Մարդահամար**

Հայաստանի Հանրապետությունում առաջին ազգային մարդահամարն անց է կացվել 2001թ. հոկտեմբերի 10-ից -19-ը:

**Մշտական բնակչություն - 3 213 011,**

որից՝  
 քաղաքային - 2 066 153  
 գյուղական - 1 146 858  
 տղամարդիկ - 1 541 999  
 կանայք - 1 671 012

**Առկա բնակչություն - 3 002 594 :**

«Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի արդյունքները» ըստ հանրապետության, ք.Երևանի և առանձին մարզերի ցուցանիշներով հրապարակումները (թվով 12), հայերեն, ռուսերեն և անգլերեն

Հայաստանի Հանրապետությունում երկրորդ մարդահամարն անցկացվեց 2011թ. հոկտեմբերի 12-ից 21-ը:

**Մշտական բնակչություն – 3 018 854,**

որից՝  
 քաղաքային - 1 911 287  
 գյուղական - 1 107 567  
 տղամարդիկ - 1 448 052  
 կանայք - 1 570 802

**Առկա բնակչություն - 2 871 771 :**

Պաշտոնական կայքէջ՝ <http://www.armstat.am> (հայելային կայքէջ՝ <http://www.armstat.info>)  
<http://www.armstatbank.am> , <http://www.armdevinfo.am>



Հայաստանի վիճակագրություն

**Գ-դադարան**

ՀՀ ԱՎԾ-ում գործում է բաց գրադարան, որտեղ առկա են ՀՀ ԱՎԾ բոլոր վիճակագրական արտադրանքները, այլ երկրների և միջազգային կազմակերպությունների վիճակագրական հրապարակումները, մեթոդաբանական ձեռնարկներ և դասագրքեր, վիճակագրության ոլորտը կարգավորող ազգային և վերազգային իրավական բնույթի փաստաթղթեր և այլն:

Երկուշաբթի - Ուրբաթ - 9.<sup>00</sup> - 18.<sup>00</sup>  
 Հեռախոս: (+ 37410) 52 33 56, 52 43 03

Պաշտոնական կայքէջ՝ <http://www.armstat.am> (հայելային կայքէջ՝ <http://www.armstat.info>) ,

Հասցեն: Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0010,  
 Հանրապետության պողոտա, Կառավարական շենք 3,  
 ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, 731 սեն.